**«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ**

| | |
|---|---|
| **ՊԱՇՏՈՆԸ** | Ոսկերիչ |
| **ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ** | Լրիվ աշխատաժամանակ |
| **ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ** | անորոշ ժամկետով |
| **ՎԱՅՐԸ** | ՀՀ, ք.Երևան |

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության Գլխամասային գրասենյակի ոսկերչի պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են Ընկերությունում գրավադրված ոսկու պարկերի, գրավի առարկաների առկայության և գնահատման ճշտության ստուգումների իրականացում:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Գրավի առարկա ոսկյա իրերի պատշաճ ձևով ստուգում, գնահատում և հետհանձնում՝ համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջների,
- Գնահատման արդյունքների մասին տեղեկատվության տրամադրում վարկային մասնագետին,
- Ոսկյա իրերի գրավը պարունակող պարկերի հանձնում դրամարկղ և դրամարկղից դրանց հետընդունում՝ համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջների,
- Ոսկու և թանկարժեք զարդերի շուկայում էական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում անմիջական ղեկավարին,
- Հաշվետվությունների կազմում և ներկայացում:

**ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

- միջնակարգ, միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն (բարձրագույն կրթությունը կամ ոսկերչության մասնագիտացմամբ միջին մասնագիտական կրթությունը նախընտրելի է),
- վերջին 5 տարվա ընթացքում առնվազն 6 ամսվա աշխատանքային փորձ որպես ոսկերիչ-գնահատող (նախընտրելի է ֆինանսաբանկային ոլորտում),
- ոսկու հարգերի, թանկարժեք քարերի և զարդերի գնահատման մեթոդների և ճանաչելիության չափանիշների իմացություն,
- ազնվություն և անաչառություն,
- բծախնդրություն,
- հայերենի գերազանց իմացություն:

**ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք.Երևան 0032, Սեբաստիա 123 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

| | |
|---|---|
| ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲԸ՝ | 09 սեպտեմբերի 2019 |
| ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ | 23 սեպտեմբերի 2019 |